ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտ. գիտ. դոկտոր-պրոֆեսոր
Ա. ՌՈՒԽԿՅԱՆ

ՄԻՋՈՒՐԻՆՅԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒՅՑՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆՈՐ ՑԵՂԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Ալագյազի սովխոզում կարդացած հրապարակային դասախոսության սղագրությունը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1949

24 SEP 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտ. գիտ. դոկտոր-պրոֆեսոր
Ա. ՌՈՒԽԿԵԱՆ

ՄԻՋՈՒՐԻՆՅԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՆՎԱԾՈՒՄՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆՈՐ ՑԵՂԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Ալագյազի սովխոզում կաբդացած հրապարակային դասախոսության զեկուցումը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1949

24 JUL 2013

Профессор, доктор с.-х. наук
А. РУХКЯН

Достижения мичуринцев-животноводов в деле создания новых пород сельхозживотных

(На армянском языке)

Издание Арм. Общества по распространению
политических и научных знаний
Ереван, 1949 г.

Բնության մեծ վերափոխիչ, սովետական ականավոր բնախույզ, ժամանակակից պրոգրեսիվ բիոլոգիական գիտության ստեղծող Ի. Վ. Միչուրինի անունը մեր երկրի միլիոնավոր աշխատավորների մեջ անոահման սեր ու հարգանք է առաջացրել դեպի նա։

Միչուրինի ուսմունքի ուժը կյանքի, սոցիալիստական շինարարության պրակտիկայի հետ նրա ունեցած օրգանական կապի մեջ է։

Մինչ Միչուրինը բիոլոգիան հայեցողական, նկարագրական գիտություն էր, որը միայն բացատրում էր բնության երևույթները։ Իսկ Միչուրինից սկսվեց այնպիսի բիոլոգիական գիտության ժամանակաշրջան, որը վերափոխում է կենդանի բնությունը և ակտիվ ու գիտակցորեն ղեկավարում այն։ Ստեղծագործորեն զարգացնելով դարվինիզմը, Միչուրինը բացահայտեց այն պատճառները, որոնք առաջացնում են օրգանիզմների փոփոխականությունը նրանց անհատական զարգացման պրոցեսում։ Միչուրինն ապացուցեց, որ օրգանիզմների կյանքի պայմանների, նրանց գոյության պայմանների փոփոխման միջոցով մարդը փոփոխում է նրանց բնույթը, որով և ակտիվորեն ղեկավարում է էվոլուցիոն պրոցեսը։

Միչուրինյան ուսմունքն ելնում է այն բանից, որ բույսերի նոր հատկությունները, որոնք նրանց կողմից ձեռք են բերվում կյանքի պայմանների ազդեցության տակ, կարող են փոխանցվել ժառանգաբար։ Բույսերի զարգացման մասին Ի. Վ. Միչուրինի ուսմունքի վրա հենվող սովետական ագրոբիոլոգիական գիտությունն իր հետագա զարգացումը ստացավ սովետական ականավոր գիտնական, Վ. Ի. Լենինի անվան Համամիութենական Գյուղատնտեսական Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի հետազոտություններում։ Միչուրինի—Լիսենկոյի ուսմունքը ժխտում է մենդելիզմ-մորգանիզմի ռեակցիոն դրույթը՝ ժառանգական հատկությունները կյանքի պայմաններից անկախության մասին։

«Միչուրինյան ուսմունքը,—գրում է Լիսենկոն,—չի ընդունում օրգանիզմի մեջ օրգանիզմի մարմնից անկախ ժառանգական նյութերի գոյությունը։ Օրգանիզմի ժառանգականության կամ նրա մարմնի որևէ մասի փոփոխությունը միշտ հանդիսանում է կենդանի մարմնի փոփոխության արդյունք։

...Օրգանիզմը և նրա կյանքի համար անհրաժեշտ պայմանները ներկայացնում են միասնություն»։

Մեր ժողովրդի նորարարական ոգուն խորթ վեյսմանա-մորգանյան բիոլոգիայի և նրա այսպես կոչվող սաղմնային պլազմայի անփոփոխելիության, ժառանգական փոփոխականության պատճառների անճանաչելիության և արտաքին միջավայրի պայմաններից այդ փոփոխականության անկախության մասին ռեակցիոն-իդեալիստական տեսությունների դեմ մղվող պայքարում, մեր երկրում, աճեց միչուրինականների հսկայական բանակ, որը գյուղատնտեսական գիտության և պրակտիկայի ամենատարբեր բնագավառներում հաջողությամբ իրագործում է Ի. Վ. Միչուրինի ցուցումները գյուղատնտեսական կուլտուրաների նոր սորտեր և գյուղատնտեսական կենդանիների նոր ցեղեր ստեղծելու գործում։

Ի. Վ. Միչուրինի դաղափարներն անասնաբուծության ասպարեզում ամենից հաջող կերպով մարմնացել են ակադեմիկոս Մ. Ֆ. Իվանովի աշխատանքներում։ Կենդանիների նոր ցեղեր ստեղծելու գործով մարդիկ զբաղվելիս են եղել վաղուց, սակայն Մ. Ֆ. Իվանովը զոոտեխնիկական գիտության պատմության մեջ մտավ նրանով, որ նա,—ինչպես Միչուրինը բուսաբուծության մեջ,—կենդանիների բիոլոգիան խորապես ուսումնասիրելու և այն դիտենալու հիման վրա ստեղծեց կենդանիների նոր ցեղեր ստանալու գիտականորեն հիմնավորված մեթոդ։ Մ. Ֆ. Իվանովը ելնում է այն համոզմունքից, որ նոր ցեղեր կարելի է և պետք է ստեղծել միանգամայն որոշակի կոնկրետ բնա-պատմական պայմանների համար, և որ այդ պայմանները վճռական ազդեցություն են գործում ապագա ցեղի կենդանիների ամբողջ կերպարի և տիպի վրա։ Իվանովը հսկայական նշանակություն էր տալիս կերին ու կերակրմանը և վերջինների ազդեցությանը կենդանիների ներքին և արտաքին հատկանիշների վրա։ Նա գտնում էր, որ նոր հատկանիշների ստեղծման գործում կենդա-

նու օրգանիզմի վրա այդ գործոններն ավելի մեծ ազդեցություն են ունենում, քան կենդանու ցեղը և ծագումը։

Տոհմային աշխատանքում,—գրում էր ակադեմիկոս Իվանովը,— պետք է ստեղծել մաքսիմում բարենպաստ պայմաններ, մաքսիմում հնարավորություններ կերակրման և պահվածքի պայմանների վերաբերմամբ։ Այնպիսի գործոն, ինչպիսին է կենդանիներին կուտակված (խոնված) վիճակում պահելը, մինչև անգամ նրանց լավ կերակրման դեպքում, արտակարգ վատ է անդրադառնում սերնդի վրա։ Գնահատելով կենդանիներին և նրանցից լավագույնները թողնելով սերնդի համար, Մ. Ֆ. Իվանովը դեկավարվում էր ամենից արդյունատու և այն էլ լավագույն էքստերյեր և լավ առողջություն ունեցող կենդանիների ընտրությամբ։ Կենդանու կոնստիտուցիան առողջության և բարձր արտադրողականության հիմքն է կազմում։

Հետևյալ պահանջը կենդանու խոշորությունն է։ Այդ տեսակետից Մ. Ֆ. Իվանովը խորհուրդ է տալիս սերնդի համար ընտրել ավելի խոշոր կենդանիներ, քանի որ կենդանու խոշորությունը նրա զարգացման, իսկ հետևապես և բարձր մթերատվության ցուցանիշն է։

Ինչ վերաբերում է մթերատվության հարցին, արտադրանքի (բրդի, մսի, կաթի) որակին, պտղավետությանը, ապա Մ. Ֆ. Իվանովի մեթոդիկայում հարցի այդ կողմին բացառիկ մեծ ուշադրություն էր հատկացվում։

Երկարամյա աշխատանքների շնորհիվ Մ. Ֆ. Իվանովն Ուկրաինայի հարավում ստեղծեց նրբագեղմ ոչխարների նոր՝ Ասկանյան ցեղ, որը ՍՍՌՄ-ում բացառիկ բարձր գնահատական է ստացել։

Ասկանյան ցեղը մերինոս ոչխարներից ամենից բրդառատ և ամենից խոշորն է աշխարհում։ Խոյերի միջին կենդանի քաշը կազմում է 113 կգ., մաքիներինը մինչև 72,4 կգ., տարեկան տված բրդի միջին քաշը՝ մաքիներինը—6,4 կգ., խոյերինը—13,6 կգ. է։ Բրդի մաքուր ելքը 45% է։ Պտղավետությունը կազմում է՝ 100 մաքուն—130—150 գառ։

Մ. Ֆ. Իվանովը ռուսական զոոտեխնիկներից առաջինն էր, որ ոչխարաբուծության մեջ կիրառեց գծային բուծումը և ավելց այդ մեթոդով հոտի մեջ զոոտեխնիկական աշխատանք տանելու

տեսական հիմունքները։ Ներկայումս գոյություն ունեն այդ ցեղի մի շարք աչքի ընկնող գծեր, որոնց վրա սելեկցիոն աշխատանքը Մ. Ֆ. Իվանովի մահից հետո շարունակում է նրա աշակերտ, այժմ ակադեմիկոս Լ. Կ. Գրեբենը։

Խելամտորեն օգտագործելով այդ նոր ցեղի խոյերն ու մաքիները, Ասկանիայի ոչխարաբուծները անտարակույս կհասնեն նոր հաջողությունների և հետագա առաջադիմության ասկանիական հոտում։

Մի քիչ ավելի ուշ, Հյուսիսային Կովկասում, բանիտյոր Յա. Բ. Սլադկեվիչը և Ստալինյան մրցանակի լաուրեատ գոտեխնիկ Կ. Դ. Ֆիլյանսկին ստեղծեցին ոչխարների մի նոր ուշագրավ նրբագեղմ Կովկասյան ցեղ, որի համար որպես արտադրողներ նրանք օգտագործեցին Ասկանիական ցեղի խոյեր։ Այդ ցեղի ոչխարների միջին խուզը «Բոլշևիկ» սովխոզի հոտում հասցված է մինչև 6,2 կգ.-ի, խոյերինը մինչև 17,6 կգ.-ի, ընդ որում մաքիների կենդանի քաշը 63—68 կգ. է, խոյերինը 80-ից—122 կգ.։

Կովկասյան ցեղի ոչխարները, որպես ամենից ավելի արդյունավետ և լավագույն որակի կամվոլ բուրդ տվող կենդանիներ, առանձնակի նշանակություն ունեն ՍՍՌՄ-ի նրբագեղմ ոչխարարուծությունը վերականգնելու համար։

Ստալինյան մրցանակի լաուրեատ ավագ գիտ. աշխատող Գ. Ռ. Լիտովչենկոն սիբիրյան ձմեռվա խիստ ցրտի պայմաններում ստեղծել է ցրտադիմացկուն, առատ, համասեռ և նուրբ բուրդ ունեցող խոշոր ոչխարներ, որոնք ապրոբացիայից հետո ստացել են Ալթայան ցեղ անունը։ Այդ ցեղի գոյացման մեջ մասնակցել են կովկասյան և ավստրալիական մերինոսները։

Այդ նոր ցեղի տարբերիչ առանձնահատկությունը, տարեկան 5 կգ.-ի հասնող իր տված բրդի քանակի հետ միաժամանակ, կամվոլ բարակ գործվածքների համար պիտանի, նուրբ բրդի բարձր որակն է, ինչպես նաև լավ զարգացած մսային հատկությունները, ընդ որում մաքիների միջին կենդանի քաշը 58—60 կգ. է, խոյերինը—103 կգ.։

Ուշադրության արժանի է նաև Ադրբեջանում հին գետաբեկյան մերինոս ոչխարները ռամբուլյե տիպի ոչխարներով բարելավելու միջոցով Վ. Գ. Սմարագդովի, Ֆ. Ա. Մելիքովի և

Մ. Դ. Սադիխովի ստեղծած նոր ցեղը, որը կոչվում է ադրբեջանական լեռնային ոչխարի նրբագեղմ ցեղ։

Այդ ցեղի արժեքավոր հատկություններից մեկը նրա դիմացկունությունն է, որը մեծ նշանակություն ունի լեռնաարոտային պահվածքի պայմաններում։ Մաքիների միջին կենդանի քաշը 41,3 կգ. է, խոյերինը—84,6 կգ., տարեկան տված բրդի քաշը՝ մաքիներինը—4 կգ., խոյերինը—9,3 կգ., բուրդը բավականին երկար է՝ մոտ 8 սանտ., բարձր մաքուր ելքով (48,4%)։

Մեր երկրում վերջին 10 տարիների ընթացքում ստեղծված այլ նշանավոր ցեղերի թվում ուշադրության արժանի է դազախական նրբագեղմ ոչխարը, որը ստեղծել է Ստալինյան մրցանակի լաուրեատ Վ. Ա. Բալմոնտը։ Այդ ցեղը ստեղծված է շուրջ տարվա արոտային պահվածքի պայմաններում, որի հետևանքով նա աչքի է ընկնում կոնստիտուցիոնալ մեծ ամրակազմությամբ ու հարմարվածությամբ Ղազախստանի ՍՍՌ-ի տեղաշրջիկ ոչխարաբուծության պայմաններին։ Այժմ այդ ցեղը լայնորեն ներդրվում է կոլխոզային արտադրության մեջ։ Ղազախական նրբագեղմ ոչխարի արդյունավետության մասին պատկերացում են տալիս հետևյալ տվյալները՝ խոյերի կենդանի քաշը միջին թվով հավասար է 100 կիլոգրամի, մաքիներինը—60—65 կգ.-ի, գեղմի քաշը 3,6—4,5 կգ.-ի։ Բուրդը համասեռ է, 53—56%-ի մաքուր ելքով, որակն ըստ Բրոդֆորդի սիստեմի 60—64։

Ներկայումս Վ. Ա. Բալմոնտի ղեկավարությամբ աշխատանքներ են տարվում և արդեն դրական արդյունքներ են ստացված ղազախական մսա-բրդատու ցեղի ոչխար ստեղծելու, ինչպես նաև ոչխարների Դեգերեսյան և Սարաջինյան ցեղերի բարելավման առպարեզում։

Հաջողությամբ է ավարտված Ստալինյան մրցանակի լաուրեատ Ա. Վ. Վասիլևի ղեկավարությամբ Կույբիշևի մարզում տարած բազմամյա աշխատանքը ոչխարների նոր վաղահաս կիսակոշտաբուրդ ցեղ ստեղծելու առպարեզում։ Այդ ցեղը կոչվում է Կույբիշևյան մսա-բրդատու ցեղ։ Նա ստեղծված է տեղական Չերկասյան ցեղի և Ռոմնի-մարշ ցեղի ոչխարների վերարտադրական խաչաձևման միջոցով Կույբիշևի մարզի Կոշկինյան Պետտնտմաբուծարանի գործունեության շրջանի կոլխոզներում։

Կուլբիշևյան այդ նոր ցեղի ոչխարներն իրենց լավ մսային ձևերի հետ միաժամանակ օժտված են բարձր կենդանի քաշով, որը խոյերի մոտ հասնում է 102 կգ.-ի, մաքիներինը՝ 73 կգ.-ի։ Կուլբիշևյան ցեղի ոչխարների գեղմը հիմնականում շտապելային կազմություն ունի, բուրդը լիովին համասեռ է, բավարար խտությամբ և 15 սմ միջին երկարությամբ։ Խոյերի տարեկան տված բրդի քաշը հավասար է 5,5 կգ.-ի, մաքիներինը—4,1 կգ.-ի, բրդի մաքուր ելքը 60% է։

Հանդիսանալով հայրենական վաղահաս կիսակոշտաբուրդ տեղական ոչխարների առայժմ դեռ միակ ցեղը, կուլբիշևյան ոչխարը պետք է մեծ դեր խաղա այն շրջաններին տոհմային կենդանիներ մատակարարելու գործում, որտեղ պետք է զարգացվի մսա-բրդատու ոչխարաբուծությունը։

Մսա-բրդատու ոչխարներ ստեղծելու ասպարեզում Գորկու մարզում նման աշխատանք է անցկացրել դոցենտ Կապագինսկայան։ Նրա ստեղծած ոչխարները բարձր գնահատական են ստացել ՍՍՌՄ-ի Գյուղատնտեսության Մինիստրության Զոոտեխնիկական Խորհրդի կողմից և այժմ գտնվում են ապրոբացիայի շրջանում՝ որպես նոր ցեղի ոչխարներ։

Վերջապես, Վրացական ՍՍՌ Անասնապահության ինստիտուտի ավագ գիտ. աշխատակից Ստալինյան մրցանակի լաուրեատ ընկ. Նատրոշվիլին ստեղծել է ճարպալոչավոր ոչխարների նոր ցեղ, որը կոչվում է վրացական ոչխար։ Այդ ցեղի ոչխարները տալիս են 2,5—կգ. բուրդ և բավականին համասեռ կիսակոշտ բրդի հետ միաժամանակ աչքի են ընկնում մեծ կենդանի քաշով՝ մաքիներինը—50 կգ., խոյերինը մինչև 90 կգ., պահպանելով տեղական ոչխարների համար ճարպավոր պոչը։ Ներկայումս այդ ցեղը լայնորեն ներդրվում է Վրացական ՍՍՌ-ի ոչխարաբուծական շրջանների մի շարք կոլխոզներում։

Կաթնատու անասնապահության բնագավառում միչուրինյան բիոլոգիայի ամենամեծ նվաճումը խոշոր եղջերավոր անասունի Կոստրոմյան նոր ցեղի ստեղծումն է Ստալինյան մրցանակի լաուրեատ Ս. Ի. Շտեյմանի ղեկավարությամբ։

Ս. Ի. Շտեյմանի հաջողությունները պետք է բացատրել առաջին հերթին նրանով, որ «Կարավայևո» սովխոզում (Մոսկվայի մարզի Կոստրոմայի շրջան) շատ տարիների ընթացքում սիս-

տեմատիկորեն անց է կացվում կոմպլեքսային զոոտեխնիկական միջոցառում՝ մատաղշների ռացիոնալ կերակրման և աճեցման, կթելու ճիշտ կազմակերպման, նպատակադիր և խոր մտածված ընտրության, ինչպես նաև անասունների օրինակելի պահվածքի ապահովելու։

«Կարճ ասած,—գրում է Շտեյմանը,—տոհմային աշխատանքը հանդիսանում է զոոտեխնիկական այն բոլոր միջոցառումների գումարը, որոնք ուղղված են հոտի բարելավմանը։ Եթե այդ շղթայից հանենք թեկուզ հենց մեկ, միևնույն է թե որ, օղակ, ապա իսկական լրիվ հաջողություն երբեք չի ստացվի։ Այդ կանոնների թեկուզ և մեկի խախտումը կարող է վիժեցնել մյուս, անրասիր կատարվող, կանոնների ազդեցությունը»։

Կոստրոմյան ցեղի արդյունատվության բարձրացման և կատարելագործման գործում Շտեյմանը մեծ նշանակություն է տալիս գործին նվիրված այնպիսի կադրերի ընտրությանը և դաստիարակմանը, որոնք ընդունակ են Միչուրինի օրինակով համբերատար ուսումնասիրել յուրաքանչյուր կենդանու և աշխատել նրա բարելավման վրա։

Եվ նրան հաջողվեց դաստիարակել այնպիսի կադրեր, որոնք երկար տարիներ անընդհատ աշխատելով տեղում, հասան ուշագրավ արդյունքների։

Ինքը Ս. Ի. Շտեյմանը «Կարավայևո» տոհմաբուծական տնտեսությունում աշխատում է 20 տարուց ավելի և նրա հետ միասին տևական ժամանակ աշխատում են շատ բրիգադիրներ և կթվորներ, որոնք իրենց ստացած բարձր արտադրական ցուցանիշների համար արժանացել են Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչման։

Սկսելով աշխատանքը տեղական և չբարելավված կովերի նախրի վրա, Շտեյմանը սերնդի համար թողնում է խոշոր և ավելի բարձր կիթ տվող կովերից ստացված երինջներ։ Նա համոզվեց, որ ավելի խոշոր և հզոր մարմնակազմություն ունեցող կովերն ընդունակ են շատ տարիների ընթացքում տալ բարձր կիթ և լավ զարգացած սերունդ։

«Կարավայևոյի» անասնաբույծների ամբողջ պրակտիկան անժխտելի ապացույց է այն բանի, որ կաթի զոյացումը կովի կրծում ոչ միայն լիարժեք կերակրման, այլև կթելու ռացիոնալ

տեխնիկայի արդյունք է։ Կթելու լավ տեխնիկան ուժեղացնում է կաթի զոյացումը, որն առաջ է բերում վերջինի համար անհրաժեշտ նյութերի առհասք դեպի կրծի գեղձերը, և հետևաբար ծախսվող կերերի նորմաների բարձրացում։ Խոշոր բարձր մթերատու ռեկորդիստկա կովի մեկ օրում կերած կերի քանակը նրա ամենաբարձր կերի շրջանում կարող է հասնել մինչև 100 կիլոգրամի։

«Կարավայեվոյի» աշխատողները միանգամայն ճիշտ պնդում են, որ կթելու ինտենսիվության թուլացումը կարող է առաջացնել կովի ճարպակալում ի հաշիվ կաթնատվության կրճատման, այդ պատճառով էլ կովերի կթելը՝ նրանց կերակրման և պահվածքի հետ հավասարաչափ, կիթերի բարձրացման և ցեղի կաթնատու հատկությունների կատարելագործման հիմքն է։ Մշտական աշխատանքը կրծի վրա և նրան մաքրելը՝ կթելուց առաջ կոր՝ծը թարմ, գոլ ջրով լվանալը, մաքուր սրբիչով սրբելը, կթելուց առաջ և կթելու ժամանակ թեթևակի մասսաժը, հմուտ, հանդարտ և արագ կթելը պայմաններ են կրծի ուժգին զարգացման և, հետևապես, բարձր կաթնատվության համար։

Հոտի կատարելագործման ասպարեզում «Կարավայեվոյի» աշխատողների ստացած արդյունքների մասին վառ կերպով խոսում են հետևյալ թվերը. միջին թվով մեկ ֆուրաժային կովի տարեկան կիթը «Կարավայեվո» տոհմաբուծական տնտեսությունում կազմում է 6310 կգ.։ Բայց տնտեսությունում կան տասնյակ կովեր, որոնք տարեկան 10.000 լիտրից ավելի կաթ են տալիս։ Լավագույն ռեկորդիստկա Պոսլուշնիցա կովը 388 օր տևող վեցերորդ լակտացիայում տվել է 16.262 կգ. կաթ, իսկ Սիսեմա կովը առաջին տեղն է բռնում ամբողջ աշխարհում իր տված յուղի արտադրանքով։ Նրանից իր ամբողջ կյանքի ընթացքում ստացված է ավելի քան 5000 կիլոգրամ կաթնայուղ։ Նա կենդանի է և շարունակում է բարձրացնել իր ռեկորդը։

Այդ տնտեսությունում մեծ ուշադրություն է հատկացվում կենդանիների մարմնակազմությանը և առողջությանը, հատկություններ, որոնք ապահովում են կյանքի տևողությունը և բարձր արտադրողականությունը։ Այդ կովերից շատերն իրենց ամբողջ կյանքի ընթացքում տվել են 10—14 հորթ և մինչև 100.000 լիտր կաթ։

Այդ նույն Կոստրոմյան ցեղի կովերի կենդանի քաշը միջին թվով, ամբողջ նախրի վերաբերմամբ վերցրած, կազմում է 649 կգ։

Սակայն տնտեսությունում կան նաև տասնյակ կովեր, որոնց կենդանի քաշը հասնում է 700—800 և նույնիսկ 900 կիլոգրամի։

Շտեյմանի այդ բոլոր նվաճումները բացատրվում են նրանով, որ նա Միչուրինի—Լիսենկոյի ուսմունքի հիման վրա կենդանիների առատ ու լիարժեք կերակրում և մատղաշի նպատակադիր դաստիարակում էր կիրառում։

Որպեսզի կովը կարողանա իր ամբողջ կյանքում բարձր կիթ տալ, նա պետք է օժտված լինի նյութերի բարձր փոխանակության ընդունակությամբ։ Կենդանու օրգանիզմում դա ստեղծվում է վաղ հասակից սկսած՝ համապատասխան կերակրման և պահվածքի միջոցով։ «Կարավայևո» սովխոզում, որպես կանոն, հորթերին այնպես են աճեցնում, որպեսզի նրանք իրենց կաթնային շրջանում օրական 850—900 գրամ աճ ունենան։ Բայց մենակ առատ կերակրումը բավական չէ ամրակազմ, հզոր և առողջ կենդանի աճեցնելու համար։

Աճող կենդանիների պահվածքի և կերակրման ռեժիմը պետք է լինի այնպիսին, որպեսզի թոքերի, սրտի և կենսակարևոր մյուս օրգանների զարգացումն ընթանա նյութերի բարձր փոխանակության մակարդակի վրա։ Մատղաշի աճեցման և դաստիարակման ժամանակ անասնաբույծի խնդիրն այն է,— մատնանշում Ս. Ի. Շտեյմանը,—որպեսզի մատղաշին նախապատրաստի ռեկորդիստականների օրգանիզմի համար ուրույն հանդիսացող լարված աշխատանքի, զարգացնի մարսողական և շնչառական ապարատները և սրտի գործունեությունը, մշակի կայունություն արտաքին միջավայրի անբարենպաստ ներգործությունների հանդեպ։

Այդ տեսակետից մեծ ուշադրության է արժանի Ս. Ի. Շտեյմանի մշակած և նրա կողմից հաջողությամբ կիրառվող՝ հորթերի այսպես կոչվող. սառը դաստիարակման մեթոդը։

Սովորական հորթանոցներում աճեցնելիս՝ մինչև անդամ առատ կերակրման դեպքում՝ հորթերը զարգանում են թույլ, անընդունակ են լինում դիմադրելու արտաքին անբարենպաստ

ազդեցություններին և սոմոքսային և թոքային հիվանդությունների նկատմամբ դառնում են դյուրազգաց։

Հաշվի առնելով այդ հանգամանքը, Ս. Ի. Շտեյմանը փոխեց հորթերի ձմեռային պահվածքի եղանակը, և մոտեցնելով դաստիարակման շրջակացությունը բնական պայմաններին, որոշեց մատղաշ կենդանիների առատ կերակրումը նրանց ծնվելու առաջին իսկ օրից զուգորդել ձմեռ ժամանակ նրանց չտաքացվող շենքերում պահելու հետ։ Հորթերը պահվում են ընդարձակ և օդի մեծ կուբատուրա ունեցող շենքերում, որտեղ ջերմաստիճանը լինում է մինչև մինուս 10—15°։ Հորթերի տակը առատությամբ ցամքար է փռվում։ Այդպիսի պայմանների շնորհիվ հորթերը միշտ շնչում են մաքուր, թարմ օդ։

Հիվանդությունների հարուցիչները (միկրոօրգանիզմները) մինուս ջերմաստիճանում չեն զարգանում, ցածր ջերմաստիճանը հորթերի մեջ շարժման պահանջ է առաջացնում և պայմանավորում է սրտի և թոքերի լավ աշխատանքը, որին նպաստում է նաև լավ սնունդը։

Սկսած 1932 թվից, հորթերի և մատղաշի դաստիարակման նոր մեթոդը ներդնելուց հետո, «Կարավայևո» սովխոզում հորթերի անկումներ չեն եղել։

Կենդանիներին սերնդի համար ընտրելիս՝ Շտեյմանը ղեկավարվում է յուրաքանչյուր կենդանուն առանձին մանրակրկիտ և երկարատև ուսումնասիրելու սկզբունքով։ Կենդանուն կոմպլեքսորեն գնահատելու համար բավական չէ իմանալ նրա քանակական ցուցանիշները (կիթը, կենդանի քաշը և այլն), և այդ պատճառով Շտեյմանը գնահատման մեջ ներառում է և քանակական հատկանիշները՝ լակտացիայի ընթացքը, ցամաքելու առանձնահատկությունները, կիթերի աճը տարբեր հասակում և այլն։

«Եթե կովի էքստերյերում,—ասում է Շտեյմանը,—կան որոշ արատներ, ապա 2—3 հազար կիլոգրամ կիթի դեպքում նրանք այնքան էլ ուժեղ չեն արտահայտվում։ Բայց արդեն 8—12 հազար կիլոգրամ կիթի դեպքում ամենափոքր արատներն էքստերյերում արտահայտվում են շատ ուժեղ»։

Այդ պատճառով Ս. Ի. Շտեյմանը հատուկ ուշադրություն է դարձնում կենդանիների խոր և լայն կրծքի, ամուր մեջքի և

ծավալուն կրծի համար բավականաչափ, ոտքերի լայն դրվածքը պայմանավորող երկար ու լայն դավակի վրա։

«Կարավայևո» տոհմաբուծական տնտեսության կոլեկտիվի այդ բոլոր նվաճումները Միչուրինի—Լիսենկոյի առաջավոր ուսմունքը անասնաբուծության մեջ ներդնելու մի վառ օրինակ է, այդ պատճառով այդ փորձի լայն օգտագործումը կօգնի անասնաբույծներին արագացնելու մեր անասունների ցեղերի կատարելագործումը։

Խոշոր եղջերավոր անասունի մթերատվության բարձրացման ասպարեզում մեծ աշխատանք է տարված ՍՍՌ Միության մի շարք ուրիշ շրջաններում, որի հետևանքով մեր սոցիալիստական անասնապահությունը վերջին տարիներում հարստացավ այնպիսի բարձր արդյունատու ցեղերով, ինչպիսիք են Գորբատովյան կարմիրը, Գուրգանյան և Լերեդինյան ցեղերը և այլն։

Նոր ցեղեր ստեղծելու գործում աչքի ընկնող նվաճումներ կան ձիաբուծության և հայրենական ձիաբուծարանային գործի զարգացման բնագավառում։

Այսպես, Տերսկյան և Ստավրոպոլյան ձիաբուծարանների կոլեկտիվը կարողացավ օգտագործել ստրելեցյան ձիու՝ անցյալից մնացած, փոքրիկ ֆոնդը և բարդ խաչասերման ճանապարհով, դաստիարակման, կերակրման և պահվածքի միչուրինյան մեթոդով կարողացավ վերափոխել նրան նոր ցեղի, որը կոչվում է Տերսկյան։

Սովետական Միության մարշալ Ս. Մ. Բուդյոննու ղեկավարությամբ Տերսկյան ձիաբուծարանում հավաքվել է ստրելեցյան ձիու ամբողջ ֆոնդը և նրանք խաչաձևել են Դոնի, Կաբարդինյան, իսկ հետագայում արաբական ձիերի հետ։

Այդ ցեղի ստեղծման ժամանակ կիրառվել է ազգակցական բուծում, սակայն երամակային պահվածքի և օրգանիզմը կոփելու շնորհիվ հաջողվեց ստեղծել շատ դիմացկուն, առողջ և աշխատունակ, բացառապես մի երանգի և մի տիպի հեծկան ձիեր։

Բուդյոննու անվան և 1-ին Հեծելազորային Բանակի անվան ձիաբուծարաններում, դարձյալ Ս. Մ. Բուդյոննու ղեկավարությամբ, ստեղծված է ուրիշ աչքի ընկնող ցեղ, որը կոչված է Բուդյոնովյան։

Ձիերի Բուդյոնովյան ցեղի ստեղծման աշխատանքով հե-

սահմանվում էր մի նպատակ՝ ստեղծել այնպիսի ձի, որի մեջ զուգորդվեր բարձր և բազմակողմանի արտադրողականության հատկություններ՝ արագ վազելու աչքի ընկնող հատկությունը, ինչպես նաև դիմացկունությունը և հարմարվածությունը խիստ կլիմայական պայմաններին և երամակային պահվածքին։

Բուդյոնովյան ցեղի ձին ստեղծվել է հեծկան վարգուն ձիերի հատուկ ընտրած ներկայացուցիչները Դոնի ցեղի ձիերի հետ խաչաձևելու շնորհիվ։

Դրանցից հեծկան վարգուն ձիերը աչքի են ընկնում իրենց արագավազությամբ, բայց նուրբ են և կերի նկատմամբ պահանջկոտ։ Դոնի ձիերն, ընդհակառակը, աչքի են ընկնում իրենց ամրակազմ կոնստիտուցիայով, հոծ մարմնակազմությամբ, բայց ոչ այնքան ընդունակ արագ վազելու։

Այդ երկու ցեղերի հիմնական օգտակար հատկանիշները խառնածիններին մեջ համատեղ զարգացնելու համար ստեղծված են եղել ձիերի աճեցման նոր պայմաններ, այսպես կոչվող պահվածքի կուլտուրական-երամակային մեթոդ, որը թույլ է տվել խառնածիններին մեջ միաժամանակ զարգացնել Դոնի և անգլիական ցեղերի օգտակար հատկությունները, որոնք առաջ անհամատեղելի էին թվում։

Հետագա տոհմային աշխատանքի դեպքում Բուդյոնովյան ցեղի ձիերի բարձր աշխատունակությանն ու արագավազությանը նպաստում էին մատղաշի մարզանքն ու փորձարկումը իպպոդրոմներում, արոտավայրերում ձիերին մշտական շարժման մեջ պահելը, առատ կերակրումը, ինչպես նաև ընտրությունն ու հարմար ընտրումը, որոնք անց են կացվել այդ հատկությունները հետագա սերունդներում ամրապնդելու համար։

Բոլորովին նորերս, Հայրենական Մեծ պատերազմից անմիջապես հետո, ավարտվեց ծանրաքաշ ձիերի հայրենական ցեղ ստեղծելու աշխատանքը։ Այդ ցեղը կոչվում է Վլադիմիրյան։ Վլադիմիրյան մարզի գյուղացիները վաղուց ի վեր ձգտում էին ստեղծել ձիերի այնպիսի ցեղ, որը պիտանի լիներ քաղաքային տրանսպորտի և դաշտային ծանր աշխատանքների համար։ Փորձարկվել էին արտասահմանյան շատ ցեղեր, բայց դրանցից ոչ մեկը հարմար չէր։ Նրանք անչափ նուրբ էին, թույլ ու փուխր մկանակազմով և ոտքերի մշտական հիվանդություններով։

Սովորած լինելով իրենց հայրենիքում սխոռային պահվածքին, նրանք արոտավայրերում շատ վատ էին ուտում կերը և վատ էին դիմանում մեր հյուսիսային կլիմային։

Տեղական ձին ծանրաքաշ ձիերի հայտնի ցեղերի հետ խաչաձևելու և ստացված սերնդի նպատակադիր դաստիարակման և ընտրության հիման վրա վլադիմիրյան ձիաբուծները ստեղծեցին ծանրաքաշ ձիերի նոր ցեղ, որը փորձարկումների ժամանակ ցույց տվեց ծանրություններ քաշելու ավելի բարձր ընդունակություններ, քան արտասահմանյան որևէ ցեղի ձի։

Վլադիմիր քաղաքում 1946 թվին անցկացված փորձարկումների ժամանակ լավագույն հովատակները փոխադրել են հետևյալ ծանրությունը. Գրանիտը՝ 10,5 տոննա, Բարկետը՝ 9 տոննա, Շարոնն՝ 8 տոննա, Պերեց հովատակը լծասարքում 1,5 ժամում անցել է 10 կիլոմետր տարածություն, քաշելով 4 տոննա բեռ։ Այդ ցեղի մի ձին հեշտորեն քաշում է երկու միջակ ձիու դուրան, 6—8 ժամվա ընթացքում հերկելով մեկ հեկտար հողամաս։ Այդպիսի մի ձին գյուղամիջյան ճանապարհով 2—2,5 տոննա բեռը 15—20 կիլոմետր տարածությամբ քաշում է առանց հանգստի։ Այսպիսով, մի այդպիսի ձին տնտեսությունում, տրանսպորտում և հրետանիում ընդունակ է փոխարինել երեք միջակ ձիու։

Սոցարուծության որակական ցուցանիշների բարելավման միջոցառումների մշակման գործում ակտիվ մասնակցություն են ունեցել զոոտեխնիկները և մեր երկրի գիտնականները, որոնք արտադրության հարցերը լուծում են հաշվի առնելով սոցիալիստական անասնապահության առաջավորների փորձը։ Ակադեմիկոս Իվանովը մշակեց վերարտադրական խաչաձևման տեսությունն ու պրակտիկան և այդ հիման վրա ստեղծեց խոզերի մի շարք նոր ցեղեր, որոնց թվում արժանի հոչակ է վայելում ուկրաինական տափաստանային սպիտակ ցեղը, որը ստացվել է ուկրաինական տեղական սպիտակ խոշոր ցեղի խոզերի հետ կատարվող խաչաձևումների հիման վրա։

Սելեկցիայի՝ ընտրության և ծնողական զույգերի հարմար ընտրման ամբողջ աշխատանքը միչուրինյան գենետիկայի ոգով անց է կացվել կենդանիների լավ կերակրման, պահվածքի և մատղաշների նպատակադիր դաստիարակման պայմաններում։ Այդ

ցեղի չափահաս վարազների կենդանի քաշը հասնում է միջին թվով 353 կիլոգրամի, մերուններինը 233 կգ.-ի, պտղավետությունը միջին թվով հավասար է մեկ ծնին՝ 11 խոճկոր։ Այդ ցեղի հիման վրա գործում և հաջողությամբ աշխատում են մի շարք պետտոհմաբուծարաններ։

Վերջին տարիներս ակադեմիկոս Գրեբենը հաջող աշխատանքներ է տանում այդ ցեղից նոր՝ ուկրաինական տափաստանային չալիկ ցեղ ստանալու ուղղությամբ։

Տոհմային աշխատանքի վերաբերյալ ակադեմիկոս Իվանովի մշակած մեթոդիկայի և խառնածին խողերի հոտերում այդ մեթոդիկան լայնորեն օգտագործելու հիման վրա հաջողվեց ստեղծել աչքի ընկնող այնպիսի ցեղեր, ինչպիսիք են Սիբիրյան Հյուսիսային ցեղը, Միրզոյոդյանը՝ Ուկրաինայում, Լիվանյան և Բրեյտովյան ցեղերը Յարոսլավլի մարզում։ Ներկայումս պրոֆ. Ռեզկինը հաջող աշխատանքներ է տանում խոզերի Իելեյան ցեղ ստեղծելու ասպարեզում։ Մաքուր բուծման հետ միաժամանակ խոզաբուծության մեջ լայնորեն կիրառվում է արդյունաբերական խաչաձևումը՝ վաղահաս և հեշտ բտվող խոզեր ստանալու համար։

Գյուղատնտեսական կենդանիների նոր ցեղեր ստանալու գործում զգալի աշխատանք է կատարված և Հայաստանում։

Այսպես, Ալագյազի սովխոզում, պրոֆ. Ռուխկյանի ղեկավարությամբ և կրտսեր գիտ. աշխատակից Բաղալյանի ու սովխոզի ավագ զոոտեխնիկ Իգիթխանյանի անմիջական մասնակցությամբ, վերարտադրական խաչաձևման և համապատասխան նպատակադիր դաստիարակման մեթոդով ստեղծված է ճարպապոչավոր կիսակոշտարուրդ նոր տիպի ոչխար։

Անցկացված տոհմային միջոցառումների շնորհիվ նոր տիպի ոչխարների հոտը մի շարք տարիների ընթացքում սիստեմատիկաբար կատարելագործվում էր և այժմ ձեռք է բերված հոտի բավականին բավարար միատիպիկություն ինչպես ըստ կենդանիների մարմնակազմության տիպի, այնպես և ըստ նրանց արտադրողականության։ Նոր ցեղի ոչխարներն աչքի են ընկնում իրենց բարձր կենդանի քաշով, որը միջին թվով կազմում է՝ խոյերինը—85—100 կգ., մաքիներինը—53—60 կգ., ոչխարներն ունեն բնորոշ և լավ զարգացած ճարպավոր պոչ։

Մաքիները տալիս են տարեկան 3 կգ. բուրդ, որի մա-

քուր ելքը 58%-ից բարձր է։ Իրենց սրակով բուրդը երկար է՝ 10—11 սմ, լիովին համասեռ, կիսանուրբ, սրակը 56—58 ըստ Բրոդֆորդի սիստեմի և միանգամայն պիտանի է կամվոլ մանվածքի համար։

Այդ ոչխարներն աչքի են ընկնում մսա-ճարպային լավ հատկություններով, իսկ կաթնատվությամբ չեն զիջում տեղական լավագույն Մազեխ և Բալբաս ցեղերի ոչխարներին, կաթնատվության շրջանում տալով միջին թվով 50—60 լիտր կաթ։ Վերջապես, իրենց պտղավետությամբ, որը հավասար է 100 մաքուն 117 գառի, ինչպես նաև ըստ իրենց հարմարվածության տեղաշրջիկ ոչխարաբուծության պայմաններին, այդ ոչխարները արտադրական պայմաններում իրենց ցուցաբերեցին լավագույն տեսակետից։

Ներկայումս Ալագյազի սովխոզում այդ ցեղը լայնորեն ներդրվում է արտադրության մեջ և արդեն կա այդ ցեղային խմբին պատկանող 3500 գլուխ ոչխար։ Այդ թվից 1000 գլուխը էլիտային և առաջին դասին պատկանող ոչխարներ են։

Ներարուրդ, բարձրարդյունատու նոր ցեղի ոչխարներ ստեղծելու գծով նման աշխատանքներ են տարվում և մի շարք այլ շրջաններում, և պետք է հուսալ, որ մոտակա տարիներում մեր ռեսպուբլիկայի ոչխարաբուծությունը կհարստանա նոր, Հայաստանի արոտային պահվածքի պայմաններին լավ հարմարված ցեղերով։

Լոռու տոհմաբուծական սովխոզում, ինչպես նաև Կալինինոյի և Ստեփանավանի շրջանների տոհմաբուծական տպրանքային ֆերմաներում դիտական և գործնական աշխատողների մեծ կոլեկտիվը հաջող աշխատանք է կատարում Լոռվա խոշոր եղջերավոր անասունի նոր, բարձր մթերատու ցեղ ստեղծելու և կատարելագործելու ուղղությամբ։

Զոոտեխնիկների անցկացրած միջոցառումների շնորհիվ՝ Լոռվա կովերի տարեկան միջին կիթը հասցված է 2300—2500 կգ.-ի, կովերի միջին կենդանի քաշը՝ մոտ 450 կգ.-ի։

Լոռու տոհմային սովխոզի լավագույն բրիգադաներում կովերի տարեկան կիթերը հասցված է 3000 լիտրի, իսկ առանձին կովեր տալիս են 4000—5000 լիտր կաթ։

Պետք է հուսալ, որ կաթնատու անասնապահության վարե-

լու կուլտուրայի սիստեմատիկ բարձրացումը, մատղաշի առատ և ռացիոնալ կերակրումը թույլ կտա մոտագա տարիներում հասնելու էլ ավելի բարձր արտադրական ցուցանիշների։

Հայաստանում, հենց պրակտիկ անասնապահ-ճագարաբույծ Մ. Բագրատյանը ստեղծել է ճագարների նոր՝ սովետական Մարդեր ցեղը, որն աչքի է ընկնում կղաքիսի մորթին հիշեցնող իր մորթու դեղեցիկ երանգով։ Ներկայումս այդ ցեղը Անասնապահության Ինստիտուտում շարունակվում է կատարելագործվել։

Աշխատանք է ծավալված նաև խոզաբուծության, թռչնաբուծության և մեղվաբուծության բնագավառում նոր տիպեր ստեղծելու և եղածները կատարելագործելու ուղղությամբ։

Վերևում ամբողջ շարադրվածը լրիվ ակներևությամբ ցուցադրում է սովետական զոոտեխնիկայի բեղունությունը, զոոտեխնիկա, որը հիմնվում է Միչուրինի—Լիսենկոյի ուսմունքի վրա՝ գյուղատնտեսական կենդանիների նոր բարձր արդյունատու ցեղեր ստեղծելու գործում։

Այդ աշխատանքները, անասնաբուծության զարգացման եռամյա պլանի մասին պարտիայի և կառավարության որոշման լույսի տակ, խանդավառության նոր վերելք առաջացրին զոոտեխնիկական կադրերի և անասնապահական արտադրության առաջավորների շարքերում։ Այդ կապակցությամբ առանձնակի կարևոր նշանակություն ունեն այն զեկավար ցուցումներն ու նոր խնդիրները, որը դրված է ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի զեկուցման մեջ՝ Վ. Ի. Լենինի անվան Համամիութենական Գյուղատնտեսական Ակադեմիայի սեսիայում 1949 թ. մայիսի 5-ին։

Կասկած չկա, որ կոլխոզնիկներն ու սովխոզների բանվորները, միավորված գիտության աշխատողների և զոոտեխնիկների հետ, ոգևորված պարտիայի և կառավարության, մեր առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի հոգատարությամբ, պատվով կկատարեն կոլխոզային և սովխոզային հանրային մթերատու անասնապահության վերելքի վերաբերյալ սահմանված պլանը և կապահովեն կոլխոզների ու սովխոզների հետագա բարգավաճումն ու երկրում գյուղատնտեսական մթերքների առատություն ստեղծելու խնդիրը։

Խմբագիր՝ Գ. ՉԱՔԱՐՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. ՊԱՐՈՆԻԿՅԱՆ

Հանձնված է արտադրության 25/X 1949 թ.։ Ստորագրված է տպագրության 28/XI 1949 թ.։ Պատվեր № 502։ Տիրաժ 3500։ Տպագր. $1^1/_4$ մամուլ։ Մեկ մամուլ. 38000 տառանիշ։ ՎՖ 04542

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Աբովյան 124։

ԳԻՆԸ 1 Ռ.